ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ, ԵՐՈՒՍԱՂԵՄ.
ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ, ՍՏԱՄԲՈՒԼ.
ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ԲԵՅՐՈՒԹ.
ԲԱՐԵԽՆԱՄ ԲՈԼՈՐ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ:

Հրաշափառ հարության լույսը վերստին կշողա աշխարհի հորիզոններուն վրա և մեր սրտերեն ներս:

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱ՛Ի Ի ՄԵՌԵԼՈՑ, ՄԱՀՈՒԱՄԲ ԶՄԱՀ ԿՈԽԵԱՑ ԵՒ ՅԱՐՈՒԹԵԱՄԲՆ ԻՒՐՈՎ ՄԵՋ ԶԿԵԱՆՍ ՊԱՐԳԵՒԵԱՑ»:

Եվ մեր հոգիները նորեն կլեցվին խաղցր ուրախություններով: Չի կհավատանք մենք, թե դատարկ է գերեզմանը խաչյալ Քրիստոսին և ազատ է հույսին ճանապարհը դեպի հավիտենական կյանք:

Արդ, սիրելի՛ սրբազան եղբարք, հոգեշնորհ վարդապետք և արժանապատիվ քահանայք և դո՛ւք, հավատացյալ զավակներ Մեր, ցնծացե՛ք և ուրախ եղե՛ք, հոգիով հեռացե՛ք և օրհնեցե՛ք զԱստված: Եվ մանավանդ փրկության մեծ հույսով և հարուցյալ Փրկչին շնորհներով վերանորոգեցե՛ք ձեր մեջ հին մարդը և մոռեցե՛ք Իր լույսին, դառնալու համար «լուսո որդիներ» խորհուրդով, բանիվ և գործով: Թող ձեր սրտերը ջերմանան ավետարանական սիրո և խաղաղության ջուրջով և ձեր ձեռաց բոլոր գործերը ըլլան բարի, շինարար:

Թող ծաղկին ձեր եկեղեցիները Ս. Էջմիածնի ասավածային օրհնության ներքև, թող աճին ու զորանան ձեր բոլոր եկեղեցաշեն կազմակերպությունները և հաջողությամբ պսակվին ձեր սուրբ ծրագիրները և աշխատանքները:

Քաջառողջ ու բարո՛ր, իբրև հարազատ եղբայրներ, ապրեցե՛ք և գործեցե՛ք Քրիստոսի սիրով և հավատով: «ՈՉ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՉ ԽՈՐՈՒԹԻՒՆ, ԵՒ ՈՉ ԱՅԼ ԻՆՉ ԱՐԱՐԱԾ՝ ԿԱՐԷ ՄԵԿՆԵԼ ԶՄԵՋ Ի ՍԻՐՈՑ ԱՆՏԻ ԱՍՏՈՒԾՈՅ, ՈՐ Ի ՔՐԻՍՏՈՍ ՅԻՍՈՒՍ Ի ՏԷՐ ՄԵՐ» (Հռոմ. Ը 39), զի այո՛ ճշմարտապես, «ՅԱՐԵԱՒ ՔՐԻՍՏՈՍ Ի ՄԵՌԵԼՈՑ»: Եվ «ՆՄԱ ՓԱՌՔ ՅԱՒԻՏԵԱՆՍ, ԱՄԷՆ»:

«ՇՆՈՐՀՔ ԵՒ ՍԷՐ ՅԱՐՈՒՑԵԱԼ ՈՐԴԻՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՂԻՑԻՆ ԸՆԴ ՁԵԶ ԱՅԺՄ ԵՒ ՄԻՇՏ: ԱՄԷՆ»:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Ջատկական շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կրոնական խորհուրդներին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական վարչության նախագահ պր. Ալեքս Մանուկյանին (Նյու-Յորք), Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության Կենտրոնական խնամակալության մեծահարգ նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերտիգաոյին (Լիսաբոն), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարանի հանձնախմբի նախագահ պր.

երվանդ Աղաճանյանին (Նյու-Յորք), Աբգարյան ավանդի և Ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օժանդակ հանձնաժողովին (Բեյրութ), Վարդանանց ասպետների ընկերակցության (Նյու-Յորք), Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության «Մարտիրոս Սարյան» ակադեմիայի վարչության (Հալեպ), հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին, Մայր Աթոռի բարեբարերներին և ծանոթ ազգային դեմքերին:

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Զատկի առթիվ Ձերդ Սրբության կներկայացնենք մեր լավագույն մաղթանքները: Կաղոթենք, որպեսզի Տերը միշտ բարգավաճ պահե մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Ձերդ Սրբության բարձր ղեկավարության ներքև:

ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐՔ

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Ընդունեցեք բոլորիս զատկական շնորհավորությունները:

ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ

ՍՏԱՄԲՈՒԼ

Սուրբ Զատկի հրաշափառ տոնին առթիվ ընդունեցեք մեր և մեր հոտին ջերմագին շնորհավորությունները, մաղթելով Ձերդ Վեհափառության քաջառողջ կյանք:

Տերը անսասան պահե Ս. Աթոռը:

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԲԵՅՐՈՒԹ

Նորին Ս. Օծություն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին նաև բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ, ամենաջերմ և հարգալից զգացմունքներով գրված, արտասահմանի և ներքին մեր բոլոր թեմերից, թեմական առաջնորդներից, ազգային-եկեղեցական և մշակութային կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից: